

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/1

6 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց «Արգո» ՍՊԸ 21.06.2013 թ-ի բողոքը «Հ ԿԱ ՊԵԿ հսկիչ գնումների արդյունքերի վերաբերյալ 06.06.2013 թ-ի թիվ 2214533 արձանագրության դեմ:

«Արգո» ՍՊԸ տնօրենի բողոքում մասնավորապես նշված է.

Հիմք ընդունելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգը հայտնում եմ, որ ս.թ. հունիսի 6-ին էրեբունու ՀՏ գլխ. տեսուչ Արամ Ազարյանը մտավ Գ.Հովսեփյան փող. և 8-րդ փող. հատում հասցեում գործող «Արգո» ՍՊԸ-ի տաղավար և հայտնեց, որ մեկ ժամ առաջ սրահից հսկիչ գնում է կատարվել և ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ես հրաժարվեցի և պահանջեցի գնում կատարողին: Նա զանգահարեց ավագ հ/տ Կամո Մանթաշյանին, որը հինգ րոպե հետո ներկայացավ և հայտնեց, որ հիմա գնում կատարողը կգա: Հինգ րոպե հետո երևաց մի երիտասարդ, որին Կ.Մանթաշյանը ներկայացրեց որպես հսկիչ գնում կատարողի: Ես նրանից պահանջեցի վկայական, նա ասաց՝ «չունեմ տվել եմ երկարացնելու», ու թողեց գնաց: Բայց փաստն այն է, որ նա ընդհանրապես կապ չունի հսկիչ գնման հետ, քանի որ համաձայն թիվ 2214533 հանձնարարականի, գնում կատարողը, որին սպասում էինք, պետք է լիներ հ/տ Հակոբ Հակոբյանը կամ հ/տ Աննա Թարվերդյանը: Բայց, քանի որ հ/տ Աննա Թարվերդյանը չէր եկել պետք է որպես հսկիչ գնում կատարող ներկայանար հ/տ Հակոբ Հակոբյանը, որին ճանաչում ենք 2011 թ-ից: Այստեղից հետևում է, որ հսկիչ գնում չի կատարվել, խախտել են Հսկիչ գնումների մասին ՀՀ օրենքի 1.4 կետը, և առանց արձանագրություն կազմելու հեռացան:

08.06.2013 թ-ին փոստային ծառայության միջոցով ստացա հանձնարարականի մեկ օրինակը, որի 2-րդ էջում նշված էր. «Հրաժարվեց ծանոթանալ և ստանալ հանձնարագրի մեկ օրինակը», որի տակ ստորագրել էին բոլոր անդամները:

12.06.2013 թ-ին փոստային ծառայության միջոցով ստացա արձանագրության մեկ օրինակը, որի 3-րդ էջում նշված էր՝ «Արձանագրությունը Մ.Ավանյանի չծանոթանալու պատճառով ուղարկվում է փոստային ծառայության միջոցով», որի տակ ստորագրել էր միայն ավագ հ/տ Կ.Մանթաշյանը:

Այստեղից հետևություն, եթե արձանագրությունը կազմվել է տեղում, ինչու մեկ օրինակը 08.06.2013 թ-ին փոստային ծառայության միջոցով հանձնարարականի հետ չի ուղարկվել:

Թիվ 2214533 Արձանագրությունն ընդհանրապես չի համապատասխանում իրականությանը: Հ.Հակոբյանը չի երևացել և հսկիչ գնում չի կատարել:

Հակոբ Հակոբյանը հսկիչ գնում է կատարել 05.06.2013 թ-ին գնելով 1 տուփ «Դավիդով» սիգարետ 600 դրամ արժողությամբ, որի համար տրամադրվել է ՀԴՄ կտրոն: Արձանագրության 2-րդ էջի 7-րդ տողում էլ ՍՊԸ-ն դառնում է Ա/Զ, որը հրաժարվել է մուտքագրել 960 դրամը, ինչն իրականությանը չի համապատասխանում:

Նորից եմ նշում ամբողջ Նորք-Մարաշի առևտրի կետերին Հակոբ Հակոբյանը ծանոթ է որպես տեսուչ 2011 թ-ից, նա որ առևտրի կետից էլ գնում կատարեր նրան կտրամադրվեր ՀԴՄ կտրոն: Հ.Հակոբյանը «Արգո» ՍՊԸ-ի տաղավարից 06.06.2013 թ-ին ոչ մի գնում էլ չի կատարել:

14.06.2013 թ-ին փոստային ծառայության միջոցով ստանում եմ «Հ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի 11.06.2013 թ-ի թիվ 2122039 հանձնարարագրի մեկ օրինակը, որը չի ներկայացվել ինձ ծանոթանալու համար, բայց 2-րդ էջում նշված է «հրաժարվեց ստանալ և ծանոթանալ հանձնարարագրին» 3 տեսուչների ստորագրությամբ, որը չի համապատասխանում իրականությանը:

17.06.2013 թ-ին փոստային ծառայության միջոցով ստանում եմ Ակտ թիվ 2122039 (նախագիծ), որտեղ արդեն առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով: 2-րդ էջում էլ նշվում է <Սույն ակտին կցվում են դրա անբաժանելի մասը հանդիսացող ՀԴՄ կտրոնի պատճենը>, որը բացակայում էր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Արգո> ՍՊԸ տնօրենի և արձանագրությունը կազմած պաշտոնատար անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի 24.05.2013 թ-ի թիվ 2214533 հանձնարարագրի <Արգո> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 06.06.2013 թ-ի թիվ 2214533 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Հակոբ Հակոբյանս 06.06.2013 թ-ին ժամը 13:15-ին ք.Երևան, Նորք, Գ.Հովսեփյան փող. և 8-րդ փող. հատում հասցեում գորող <Արգո> ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարեցի հսկիչ գնում 960 դրամ արժողությամբ /2 հատ <Կոկա-Կոլա> 560 դրամ, 1 տուփ կոնֆետ <Մ ընդ Մ> 250 դրամ, 1 տուփ մաստակ 150 դրամ/, որի դիմաց վճարված կանխիկ գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:17-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 1500 դրամ ընդհանուր գումարով, որից հետո Ա/Ձ-ն հրաժարվեց ՀԴՄ մուտքագրել կատարված հսկիչ գնման գումարը և դուրս բերել <Z> հաշվետվությունը, անհիմն հայտարարելով, որ նշված ապրանքներն իրենից չի գնվել:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ <Արգո> ՍՊԸ-ի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Քննարկման ընթացքում ուսումնասիրությանը մասնակցած անձը նշեց, որ հարկային տեսուչ Հակոբ Հակոբյանը 06.06.2013 թ-ին ժամը 13:15-ին <Արգո> ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարել է հսկիչ գնում 960 դրամ արժողությամբ, մասնավորապես, 2 հատ <Կոկա-Կոլա> 560 դրամի, 1 տուփ կոնֆետ <Մ ընդ Մ> 250 դրամի, 1 տուփ մաստակ 150 դրամի: Գնված ապրանքների դիմաց կանխիկ վճարվել է 1000 դրամ: Ընկերության տնօրենը, որը մինչույն ժամանակ հանդիսանում է նաև առևտրի կետի վաճառողը, վերցրել է վաճառված ապրանքների դիմաց վճարված 960 դրամը, վերադարձրել է 40 դրամ, սակայն 960 դրամը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ընկերության տնօրենին ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:17-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվություն 1500 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված հսկիչ գնման գումարը ներառված չի եղել: Ստուգումն իրականացնող անձինք առաջարկել են ընկերության տնօրենին ՀԴՄ մուտքագրել հսկիչ գնման գումարը և դուրս բերել <Z> հաշվետվությունը, սակայն վերջինս հրաժարվել է՝ հայտարարելով, որ նշված ապրանքները չեն գնվել իր մոտից:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի համաձայն, ուսումնասիրությունն իրականացնող անձինք փորձել են ընկերության տնօրենին վերադարձնել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն: Սակայն ընկերության տնօրենը հրաժարվել է իր կողմից վաճառված ապրանքները հետ ընդունելուց, հսկիչ գնման գումարը

վերադարձնելուց, ինչպես նաև ապրանքները հետ ընդունելու վերաբերյալ արձանագրությունը ստորագրելուց:

Քննարկվող դեպքում ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված ապրանքների արժեքը ՀԴՄ չմուտքագրելու փաստն ապացուցելուն ուղղված հետագա գործողությունները չեն իրականացվել ընկերության տնօրենի կողմից թույլ չտալու և վիճաբանություն հրահրելու հետևանքով: Սակայն նշված հանգամանքն ինքնին չի կարող նշանակել, որ փաստացի հսկիչ գնում չի կատարվել և դրա դիմաց ընկերության տնօրենի կողմից գումար չի գանձվել:

Տվյալ դեպքում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն ՀՀ սկիզ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հանձնաժողովի 02.07.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն արձանագրությունը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի (Կարգ) 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, դիմում-գանգատը և գանգատին առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահի օգնություն



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ